«ՅԱԿԻՇԻՄԵ. Երկրային կերպարանափոխություններ» ցուցահանդեսի բացումը

Հունիսի 19-ին Հայաստանում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն ԱՈԿԻ Յուտական մասնակցեց Հայաստանի պատմության թանգարանում անցկացված «Յակիշիմե. Երկրային կերպարանափոխություններ» ցուցահանդեսի բացման արարողությանը: Միջոցառմանը ներկա էին նաև Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն պարոն Դավիթ Պողոսյանը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ պարոն Ալֆրեդ Քոչարյանը:

Ցուցահանդեսը Հայաստանում կազմակերպվել է Հայաստանի պատմության թանգարանի հետ համատեղ՝ Ճապոնիա հիմնադրամի շրջիկ ցուցահանդեսների ծրագրի շրջանակում:

Ողջույնի խոսքում թանգարանի տնօրեն պարոն Դավիթ Պողոսյանը նշեց, որ Հայաստանում առաջին անգամ ցուցադրվում են ավանդական Յակիշիմե տեխնիկայով ստեղծված շուրջ 80 կերամիկական աշխատանքներ: Նախարարի տեղակալ պարոն Ալֆրեդ Քոչարյանը, իրեն ներկայացնելով որպես ճապոնական մշակույթի մեծ երկրպագու, ողջունեց Հայաստանում ճապոնական մշակութային միջոցառումների աճող թիվը և ընդգծեց, որ հայկական հասարակության շրջանում հետաքրքրությունը ճապոնական մշակույթի նկատմամբ շարունակաբար մեծանում է:

Դեսպան Առկին նշեց, որ ցուցահանդեսը մեծ հաջողությամբ ներկայացվել է աշխարհի բազմաթիվ երկրներում և ուրախություն հայտնեց, որ այժմ այն ներկայացվում է նաև Հայաստանում: Նա բացատրեց, որ Յակիշիմե խեցեգործությունն առաջացել է Հեյան ժամանակաշրջանի վերջում՝ 12-րդ դարում: «Յակիշիմե» բառացիորեն նշանակում է «թրծված և կարծրացած», ինչը վերաբերում է այն գործընթացին, որի ընթացքում կավը բարձր ջերմաստիճանում թրծվելու արդյունքում դառնում է խիտ և ամուր:

Դեսպանը շեշտեց, որ ցուցահանդեսը միայն առօրյա օգտագործման համար նախատեսված կերամիկական առարկաների մասին չէ, այլ նաև կենդանի մշակութային ավանդույթի, որը սերնդեսերունդ փոխանցվել է մինչև մեր օրերը: Դարեր առաջ ձևավորված նույն տեխնիկաներն այսօր էլ կիրառվում են ափսեների, թասերի, ծաղկամանների և այլ կերամիկական աշխատանքների ստեղծման համար՝ պահպանելով և փոխանցելով Յակիշիմեի արվեստը ապագա սերունդներին:

Հյուրերը վայելեցին նաև ճապոնական «Ծովափի երգը» ստեղծագործության կատարումը՝ Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի դասախոս, դաշնակահար Աննա Ալեքսանյանի և վոկալիստ Կարինա Գևորգյանի կատարմամբ:

Ցուցահանդեսում ներկայացված են ավելի քան 80 աշխատանքներ, այդ թվում՝ 12-րդ դարի սափոր, Կենդանի ազգային գանձերի հեղինակած ստեղծագործություններ և ժամանակակից Յակիշիմե կերամիկական աշխատանքներ:

Ցուցահանդեսը Հայաստանի պատմության թանգարանում բաց կլինի մինչև հուլիսի 10-ը:

Ցուցահասրահը

Բացման խոսքեր

Ճապոնական «Ծովափի երգը» ստեղծագործության կատարումը

Դեսպան Առկին և պարոն Պողոսյանը

Ցուցահանդեսի դիտում

Այցելուները դիտում են Յակիշիմե կերամիկական աշխատանքները